ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐ ԳԵՎՈՐԳ ՊԱՊՈՅԱՆԻ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը

Գևորգ Պապոյան – ՀՀ էկոնոմիկայի նախարար

2. Գործուղման վայրը և ժամկետները.

Ամերիկայի Միացյալ Նահանգներ (Դետրոյթ, Վաշինգտոն), 2024թ. մայիսի 9-ից 16-ը

3. Հրավիրող կողմը.

- «Ամերիկյան երկրների մրցունակության փոխանակում» (Americas Competitiveness Exchange) ծրագիր:
- Ամերիկայի Միացյալ Նահանգների Առևտրային ներկայացուցչի գրասենյակ (USTR):
- ԱՄՆ պետական, առևտրի և գյուղատնտեսության դեպարտամենտներ:

4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).

- Մասնակցություն «Ամերիկյան երկրների մրցունակության փոխանակում» ծրագրի 18-րդ միջոցառմանը, և Հայաստանի Հանրապետությունը, որպես ծրագրի հաջորդ միջոցառման հյուրընկալող երկիր՝ պաշտոնական հայտարարման արարողությանը:
- Հայաստանի Հանրապետության և Ամերիկայի Միացյալ Նահանգների միջև Առևտրի և ներդրումների հարցերով աշխատանքային խմբի (TIFA) նիստի արդյունքում իրականացված աշխատանքների վերաբերյալ քննարկումների իրականացում:
- Մասնակցություն Ամերիկայի Միացյալ Նահանգների համապատասխան մարմինների պաշտոնական ներկայացուցիչների հետ երկկողմ հանդիպումներին:

5. Քննարկված թեմաները.

«Ամերիկյան երկրների մրցունակության փոխանակում» ծրագրի 18-րդ միջոցառման ընթացքում՝

- Ձեռներեցություն
- Առևտրի դիվերսիֆիկացիա
- Կանաչ տնտեսություն և վերականգնվող էներգիա
- Լոգիստիկա և տեղեկատվական տեխնոլոգիաներ

Հայաստանի Հանրապետության և Ամերիկայի Միացյալ Նահանգների միջև Առևտրի և ներդրումների հարցերով աշխատանքային խմբի նիստի արդյունքում ձեռք բերված պայմանավորվածությունների իրականացման շրջանակներում՝

- Արտոնությունների ընդհանրացված համակարգից (GSP) օգտվելու հնարավորությունները
- ԱՀԿ շրջանակում ընթացող բանակցությունների ընթացիկ իրավիճակը
- Արտահանման և ներմուծման գործընթացը
- ՀՀ-ԱՄՆ առևտրաշրջանառությունը և երկկողմ առևտրային կապերի զարգացումը
- Տնտեսական համագործակցության հետագա զարգացման ուղղությունները:

Ամերիկայի Միացյալ Նահանգների համապատասխան մարմինների պաշտոնական ներկայացուցիչների հետ երկկողմ հանդիպումների ընթացքում՝

- Հայաստանի Հանրապետության կողմից մշակված «Խաղաղության խաչմերուկ» նախագիծը
- Հայաստանի տնտեսական և էներգետիկ անվտանգությանն առնչվող մի շարք հարցերը
- ՀՀ տնտեսական զարգացման հեռանկարները
- Հայաստանին «Շուկայական տնտեսության կարգավիճակ» շնորհելու ուղղությամբ ՀՀ կողմից իրականացվող աշխատանքների ընթացքը
- ԱՄՆ ՄԶԳ կողմից ՀՀ-ում ծրագրերի իրականացումը
- Արտահանման դիվերսիֆիկացման ծրագրի մշակման օժանդակությունը
- ՀՀ-ից ԱՄՆ գյուղատնտեսական ապրանքների արտահանման ծավալների ավելացման հնարավորությունները
- Գյուղատնտեսության ոլորտում տեխնիկական աջակցության տրամադրման հնարավորությունները:

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

«Ամերիկյան երկրների մրցունակության փոխանակում» (ACE) ծրագրի օրակարգով հաստատված քննարկումների և միջոցառումների ընթացքում քննարկվել և ներկայացվել են ՀՀ տնտեսության կառուցվածքը, ներդրումների իրականացման հնարավորությունները: «Ամերիկյան երկրների մրցունակության փոխանակում» ծրագրի 18-րդ միջոցառման ավարտական փուլի ընթացքում տեղի ունեցավ վերոնշյալ ծրագրի 19-րդ միջոցառումը Հայաստանի Հանրապետությունում անցկացնելու, Ծրագրի իրականացումը ՀՀ-ին փոխանցելու պաշտոնական արարողությունը, որի շրջանակներում ելույթով հանդես են եկել ՀՀ էկոնոմիկայի նախարար Գևորգ Պապոյանը և ԱՄՆ-ում ՀՀ դեսպան Լիլիթ Մակունցը:

Առանձին հանդիպումներ են կազմակերպվել Ամերիկյան պետությունների կազմակերպությունում ԱՄՆ դեսպան Ֆրանցիսկո Մորայի և Մրցունակության, նորարարության և տեխնոլոգիաների պատասխանատու Սեզար Պարգայի հետ: Քննարկվել են Ծրագրի պլանավորման, իրականացման և կազմակերպման մանրամասն քայլերը: ԱՄՆ Պետական դեպարտամենտի տնտեսական զարգացման խորհրդատու Ջուլիաննա Այնես-Նեվիլի հետ քննարկվել են Ծրագրի՝ 2024թ.-ի աշնանը Հայաստանում անցկացնելու ժամկետներին, նախնական օրակարգին, ինչպես նաև միջոցառման կազմակերպման աշխատանքներին Ամերիկյան պետությունների կազմակերպության ներգրավվածությանն առնչվող հարցերը:

Մայիսի 13-ին Վաշինգտոնում ՀՀ էկոնոմիկայի նախարար Գևորգ Պապոյանը հանդիպել է ԱՄՆ պետքարտուղարի էներգետիկ ռեսուրսների հարցերով տեղակալ Ջեֆրի Փայեթի հետ:

Հանդիպման ընթացքում քննարկվել են մի շարք հարցեր, մասնավորապես՝ ներկայացվել է Հայաստանի Հանրապետության կողմից մշակված «Խաղաղության խաչմերուկ» նախագիծը, վերջինիս իրականացման արդյունքում ակնկալվող տարածաշրջանային զարգացումները, Հայաստանի ներկայիս տնտեսական իրավիճակը և Հայաստանին «շուկայական տնտեսության կարգավիճակ» շնորհելու ուղղությամբ ՀՀ կողմից իրականացվող աշխատանքների ընթացքը: Առանձնահատուկ

ուշադրություն է հատկացվել ՀՀ-ում վերջին տարիների ընթացքում տեղի ունեցած օրենսդրական բարեփոխումներին, ՀՀ-ԵՄ համագործակցությանը, ՀՀ-ԵՄ Համապարփակ և ընդլայնված համաձայնագրի շրջանակներում զարգացումներին, Հայաստան – ՀՀ սփյուռք (ԱՄՆ) – ԱՄՆ հարաբերություններին:

Հանդիպում է կայացել նաև ԱՄՆ Առևտրային ներկայացուցչի՝ Եվրոպայի և Միջին Արևելքի հարցերով տեղակալ Բրայան Թրիքի հետ: Հանդիպման ընթացքում ընդգծվել է հայ-ամերիկյան տնտեսական հարաբերությունների զարգացման կարևորությունը, մասնավորապես՝ ԱՄՆ ՄԶԳ կողմից ՀՀ-ում ծրագրերի իրականացումը, արտահանման դիվերսիֆիկացման ծրագրի մշակման օժանդակությունը, ինչպես նաև ՀՀ և ԱՄՆ միջև Առևտրի և ներդրումների հարցերով աշխատանքային խմբի վերջերս կայացած նիստի արդյունքում ձեռք բերված պայմանավորվածությունների հետևողական իրականացման անհրաժեշտությունը:

Մայիսի 14-ին Վաշինգտոնում ՀՀ էկոնոմիկայի նախարար Գևորգ Պապոյանը հանդիպել է ԱՄՆ Առևտրի դեպարտամենտի քարտուղարի արդյունաբերության և անվտանգության գործակալության արտահանման վերահսկողության հարցերով տեղակալ Մեթյու Աքսելրոդի հետ: Հանդիպման ընթացքում զրուցակիցներն անդրադարձել են Հայաստանի տնտեսության դիվերսիֆիկացման ընթացքին, ԱՄՆ ՄԶԳ կողմից մշակվող արտահանման ռազմավարության փաստաթղթին, Հայաստանի Հանրապետությանը «շուկայական տնտեսության կարգավիճակ» տրամադրելու նպատակով համապատասխան դիմումի ներկայացման ընթացքին, ինչպես նաև քննարկել են ՀՀ-ԱՄՆ երկկողմ առևտրի ծավալների ավելացման և երկուստեք հետաքրքրություն ներկայացնող այլ հարցերը:

Հանդիպում է կայացել նաև ԱՄՆ Գյուղատնտեսության դեպարտամենտի առևտրի և գյուղատնտեսության ոլորտում արտաքին հարցերով փոխքարտուղարի տեղակալ Ջեյսոն Հայֆմեյսթերի հետ: Հանդիպման ընթացքում քննարկվել են ՀՀ պարենային անվտանգության բարձրացմանն ուղղված հնարավոր քայլերը, ՀՀ-ից ԱՄՆ գյուղատնտեսական ապրանքների արտահանման ծավալների ավելացման հնարավորությունները, անհրաժեշտ կարգավորումները, ինչպես նաև

գյուղատնտեսության ոլորտում տեխնիկական աջակցության տրամադրման հնարավորությունները:

Բոլոր վերոնշյալ հանդիպումներին մասնակցել են նաև ԱՄՆ-ում ՀՀ դեսպան Լիլիթ Մակունցը և ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ Նարեկ Հովակիմյանը:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

«Ամերիկյան երկրների մրցունակության փոխանակում» Ծրագրի կազմակերպիչները հայտնել են իրենց պատրաստակամությունը աջակցել Հայաստանի Հանրապետությունում կայանալիք՝ Ծրագրի 19-րդ միջոցառման նախապատրաստական աշխատանքների ամբողջ ընթացքին: Ձեռք է բերվել պայմանավորվածություն ավելի սերտ համագործակցության վերաբերյալ՝ ՀՀ-ում կայանալիք միջոցառման բարձր մակարդակով անցկացման նպատակով:

Վաշինգտոնում կայացած հանդիպումների ընթացքում փաստաթղթեր չեն ստորագրվել:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

- Նախաձեռնել համապատասխան գործընթաց՝ 2015թ. մայիսի 7-ին ստորագրված Հայաստանի Հանրապետության կառավարության և Ամերիկայի Միացյալ Նահանգների կառավարության միջև առևտրի և ներդրումների շրջանակային Համաձայնագիրը (TIFA) ընդլայնելու նպատակով:
- Ապահովել ԱՄՆ կողմից «շուկայական տնտեսության կարգավիճակի» տրամադրման նպատակով ընթացող գործընթացի շրջանակներում անհրաժեշտ բոլոր աշխատանքները, մասնավորապես՝ ընդլայնել համագործակցությունը ԱՄՆ շահագրգիռ գերատեսչությունների հետ՝ կարևորելով նաև ԱՄՆ-ում ՀՀ դեսպանության անմիջական ներգրավվածությունը գործընթացին:

- Մեկնարկել «Ամերիկյան երկրների մրցունակության փոխանակում» Ծրագրի 19-րդ միջոցառումը 2024թ. աշնանը Հայաստանի Հանրապետությունում անցկացման համար անհրաժեշտ բոլոր գործընթացները՝ միջոցառումը բարձր մակարդակով անցկացնելու նպատակով:
- Ապահովել ԱՄՆ Գյուղատնտեսության դեպարտամենտ համապատասխան դիմում-հայցերի ներկայացումը՝ հայկական մի շարք ապրանքատեսակների ԱՄՆ արտահանման գործընթացները մեկնարկելու նպատակով:
- Ապահովել Հայաստանի Հանրապետության և Ամերիկայի Միացյալ Նահանգների միջև Առևտրի և ներդրումների հարցերով աշխատանքային խմբի (TIFA) հերթական նիստի անցկացումը Երևանում՝ ամերիկյան կողմի հետ վերջնական համաձայնեցնելով ժամկետներն ու օրակարգը:

9. Ստորագրությունը, ամսաթիվը:

23.05.2024թ.

Հավելված N 2
ՀՀ վարչապետի 2023 թվականի մարտի 23-ի
N 326-Ն որոշման

Հավելված N 3
ՀՀ վարչապետի 2018 թվականի
սեպտեմբերի 19-ի N 1230-Ն որոշման

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐՋՆԱՀԱՇՎԱՐԿԻ ՄԱՍԻՆ

1. Մարմնի անվանումը՝ **ՀՀ էկոնոմիկայի նախարարություն**

2. Գործուղման մասին իրավական ակտի համարը՝ ՀՀ վարչապետի N 420-Ա և N 460-Ա որոշումների առ 07.05.2024թ, 20.05.2024թ

3. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը (մասնագիտությունը)՝

Գևորգ Պապոյան - Էկոնոմիկայի նախարար

(թվարկել՝ պատվիրակություն գործուղելու դեպքում)

4. Գործուղման ժամկետները՝

2024 թվականի մայիսի 9-16-ը

5. Գործուղման վայրը՝ Ամերիկայի Միացյալ Նահանգներ (**Դետրոյթ, Վաշինգտոն**)

6. Գործուղման ծախսերի ֆինանսավորման աղբյուրը՝ Հայաստանի Հանրապետության 2024 թվականի պետական բյուջեով արտասահմանյան պաշտոնական գործուղումների համար նախատեսված միջոցների հաշվին:

1) հրավիրող կողմի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը
(թվարկել՝ ճանապարհածախս, գիշերավարձ, օրապահիկ և այլն)

---

2) պետական բյուջեի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը
(ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմանը համապատասխան)
(ընդգծել ծախսերի փոխհատուցման տարբերակը)

[redacted] ա. փաստացի կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթերի հիման վրա՝ դրանցով սահմանված չափով, բայց ոչ ավելի, քան ցանկով նախատեսված չափերը

☐ բ. գործուղման անհատական իրավական ակտով տվյալ գործուղման փաստացի կատարված ծախսերի հատուցման պահանջի համաձայն

Ծախսի տեսակը		Գևորգ Պապոյան	Ընդամենը (դրամ)
Ճանապարհածախս	Ավիաճառայության տեսակը (էկոնոմ դաս,բիզնես դաս)	Երևան-Ֆրանկֆուրդ-Դետրոյթ-Վաշինգտոն-Դոհա-Երևան	
	Ավիատոմսի արժեքը (դրամ)	1,205,754	1,205,754
Գիշերավարձ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով, USD, **Դետրոյթ**) 124$	166.75	
	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով, USD, **Վաշինգտոն**) 195$*40%	195.0	
	Վճարը 1 օրվա համար, **Դետրոյթ** (դրամ)	64,646	
	Վճարը 1 օրվա համար, **Վաշինգտոն** (դրամ)	75,597	
	Օրերի քանակը, **Դետրոյթ**	2	
	Օրերի քանակը, **Վաշինգտոն**	4	
	Ընդամենը (դրամ)	**431,681**	**431,681**
Օրապահիկ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով, USD, **Դետրոյթ**)	98	
	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով, USD, **Վաշինգտոն**)	147	
	Վճարը 1 օրվա համար,**Դետրոյթ** (դրամ)	37,998	
	Վճարը 1 օրվա համար, **Վաշինգտոն** (դրամ)	56,996	
	Օրերի քանակը, **Դետրոյթ**	3	
	Օրերի քանակը, **Վաշինգտոն**	5	
	Ընդամենը (դրամ)	**399,010**	**399,010**
Այլ ծախսեր	Հակահամաճարակային		
	Նմուշառումների վճար		
	Մուտքի արտոնագրի վճար		
	Այլ ծախսեր (նկարագրել)		
Ընդամենը ծախսեր (դրամ)		**2,036,445**	**2,036,445**

*08.05.2024թ. ՀՀ ԿԲ արտարժույթի միջին փոխարժեք՝ 1 USD=387.73 դրամ
*17.05.2024թ. ՀՀ ԿԲ արտարժույթի միջին փոխարժեք՝ 1 USD=387.60 դրամ
*22.05.2024թ. ՀՀ ԿԲ արտարժույթի միջին փոխարժեք՝ 1 USD=387.97 դրամ

Գլխավոր քարտուղար
/Գլխավոր ֆինանսիստ/՝ ՀԱՅԿԱՆՈՒՇ ՆԱՍԻԲՅԱՆ